# ՇԱՐԱԿԱՆ

## Ս. ՏԱՐԱԳՈՍԻ ՊՐՈՎԲՈՍԻ ԵՒ ԱՆԴՐՈՆԻԿԵԱՑ

### ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԴԿ.

Այսօր ընդ հրաբուն զինուորութեանց՝ խմբեալք գունդք մարտիրոսական զինուորութեանց յոր հանդիսի քո զինուորին Տարագոսի զհանդիսադիրդ օրհնեն. բարեխօսութեամբ սորա Քրիստոս խնայեա ի մեզ։

Եւ զքաջութիւն գազանաց՝ ի մէջ գոլով գայլոց գառն ի հօտէ քո Պրոբոս՝ ոչխար վանեալ հալածանօք յաղթեալ մարմնով զգազանութիւն կատաղութեան պարտեաց. բարեխօսութեամբ սորա Քրիստոս խնայեա ի մեզ։

Ի ձաղիկ գանալից մարմնով ի գըժնդակ տանջանս, Անդրոնիկոս ըստ անուանն իւր այր յաղթօղ՝ Թագաւորաց յաղթէր, զգունդս դիւաց բելիարաւ հերքեալ, և զառիւծուց բերանսն սանձեալ. բարեխօս։

† Այսօր զԵրրորդութեան դերից նահատակաց, զՏարագոսի զՊրոբոսի և զԱնդրոնիկոսի զջան՝ առաքինաբար վասն քո ժուժկալութեան՝ քեզ ի մաղթանս ածեմք. բարե։

Այսօր ի մարմնոյ անմարմնացեալ ցուցան, Պրովբոս ճնշեալ զմարմին չարչարանօք ընդ ընկերացն երկամբ. որք զինուորեալք երկնաւորին և երկնաւորք եղեն մարմնով յերկրէ. բարե։

Այսօր զկեանս անմահ առացան մահուամբ, Անդրոնիկոս հանդիսին հաղորդակցօք երանապէս թագեալ. զորս երկնային լուսոյ ծագմամբ յայտնեալ ցուցեր պսակելով փառօք. բարեխօս։

ԴԿ. Երրորդութեան երրեակ թիւ՝ երեք մաքրեալք հանդիսիւ, նախ ի Տարսոն չարչարեալք, և ի Մամլեստիա տանջեալք. յԱնարզաբա կատարեալք, ըստ հասակաց երից ընտրեալք։

Քաջամարտիկ զինուորեալ, ընդ մարմնոյ կեանս ոչ պատուեալ. Տարագոս պըսակեալ, զամբոխ չարեացըն խռովեալ. Քրիստոսի թագաւորին՝ քաջ հաճոյ զօրավարին։

Պրովբոս զանբիծըն զառին՝ բերեալ ըզ տիպն ի յանձին. ըստ հեզութեան ոչխարի՝ պատարագեալ ի սպանդի. պարզ աղաւնի և խորագէտ՝ զօձըն պարտեալ զհնարագէտ։

Որ քերանաց ժուժկալեալ՝ Անդրոնիկոս այրացեալ. ըզմարդըն հին մերկացեալ, որ ցանկութեամբըն պատրեալ. նախ յաղթողին յաղթելով, զպատկերն անաղտ կատարելով։

Վայելչացեալք բարութեամբ, ի միասին բնակութեամբ, եղբայրական միութեամբ, և մի հանդէս ճըգնութեամբ. որով ի մի պսակեցայք, տուք ձրի և մեզ զոր ընկալայք։

Ծերդ ի հանդէս մանկացեալ՝ զմերս նորոգեա ըզհնութիւն, որ յայրութիւն կատարեալ, զմեր կատարեա պակասութիւն. մանուկդ որ քաջ ի յաղթութիւն, տուր ի չարեաց մեզ տղայութիւն։

Որ սըրբեցէք ի յանձին, ի կեանս և մահ ձեր կըրկին. զբոլոր հասակ մարդկային, սկիզբն և ըզմէջ ընդ վախճանին. մաղթեցէք ըզմեզ փրկել, և յամենայն մեղաց սըրբել։

### ՀԱՐՑ ԴՋ.

Որ միածնիդ մկրտութեան, և բաժակի հաղորդութեամբ՝ հայր երկնաւոր առ ի վերուստ պարգևեցեր յաջմէ փառօք դասել սըրբոց Տարագոսեանց. աղաչանօք սոցա կեցո զմեզ Տէր Աստուած հարցն մերոց։

Որ ի յերկինս Հօր առաջի և հրեշտակաց՝ խոստովանեալ զաւանեցեր Հօր միածին զխոստովանողսն քո յերկրի՝ յառեան մարդկան չարչարանօք զքաջն Պրովբոս և զընկերսն իւր սուրբ. աղաչանօք սոցա։

Որ ի ժամու վկայութեան մատնեցելոցն

digitised by A.R.A.R.@

ի փորձ մահու, որ վասն քո սուրբ Ոգւոյ բան ազգաց շնորհեցեր զանճառ խորհուրդ քո թարգմանել, և հանճարով պատասխանել, դու խօսելով յԱնդրոնիկոս և յընկերսն իւր սուրբ. աղաչանօք սոցա կեցո:

Գ. ԸզՏէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան:

Որ զչափ այրական հասակ Յիսուսի փրկչին, Պրովբոս կրկին յանձին կատարեաց, և աշխարհի մահուամբ յաղթեաց. ըզտէր օրհ:

Որ զծերութիւն պարարտ յիւղ օծման ոգւոյն, Տարագոս նոր հասմամբ նորոգեաց և մանկացեալ արեամբ ծաղկեաց. ըզՏէր:

Որ զիմաստութեան ալիս անարատ կենաց, Անդրոնիկոս մանուկն փայլեաց. և զբելիար այսօր պարտեաց. ըզՏէր օրհ:

ՈՂՈՐՄԵԱ ԴՁ.

Որ ի բնութեանս երից հասակաց, զերիս վկայսն Երրորդութենէ ընկալար. զծերն և զմանուկ և զայր կատարեալ. մաղթանօք սոցա և մեզ ողորմեա:

Մաքուր մարմնօք ցուցին զբանդ եղեալ մարմին. և մահուամբ զմահ քո վկայեցին Անդրոնիկոս, Պրովբոս և Տարագոս զինուորք երկնային. մաղթ:

Որք ընդ վայրի գազանս խաղացին, սիրովդ զհուր և զսուր կոխեցին. զխաչ քո բարձեալ ընդ քեզ վկայք երեքին. մաղթանօք սոցա և մեզ ողորմեա:

ՏԷՐ ԵՐԿՆԻՑ ԴՁ.

Հրեշտակական պարուն յերկինս՝ այսօր յերկրի մարդիկ ձայնակցեալ՝ զձեզ դրուատեմք տօնիւ հռչակեալ. թիւ զուգելի վկայք ընտրեալ սկիզբն և աւարտ և մէջ լրացեալ. երեք նահատակք սուրբ Երրորդութեան:

Երկնաւորին բաղձմամբ սիրոյ, զփառս և զաշխարհ զինուորդ պարտեալ, յաջ և յահեակ Տարագոս զինեալ՝ ոչ ի խոստմանց մարդկան պատրեալ, և ոչ ահեղ չարչարանաց չար կրից երկուցեալ, այսօր անթառամ թագիւ յերկինս անմահ եղէք պսակեալ:

Թագեցելոյն յանճառ փառաց՝ հաղորդակից կենօք Պրովբոս լաւանօղ աղքատութեամբ ոգւոյ երանեալ, զանձն և զկեանս ողջակիզեալ և տանջանաց քրայիւ ոսկի մաքրեցեալ. որպէս արեգակն յարքայութեան ծագել այսօր խոստումն ընկալար:

Որք անցելով զբոլոր մարմին զխայթուած օձին նախնոյն բըժշկեալ. զապականօղ փուտ մարդն հնացեալ մորմոքելով աղին պնդեալ Անդրոնիկոս, այսօր զմարմին անփուտ սրբեցեր անճառ փոխարէն առեր փառաց զոր յերկրի թողեր:

Խիւսեալ սրբոյ Ոգւոյն ի մի՝ ի ձեզ խօսեալ զփառակիցն իւր վկայեցիք՝ համամամբ լեզուաց զբանն ուղղեցիք. այրմամբ ձեռին ձիր տալ առիք, կըտրեալ ունկամբ լսել զմաղթանս ձեր հաւատացիք, մաղթեցէք սրբել զանձինս մեր ի մեղաց:

Մարմնոյ աչաց ձեր խաւարմամբ՝ լոյս լինելով լուսաւորել, զմեզ ընկալայք ատամնաթափ քան քաղց յագեցայք մահուամբ անմահ կենդանացայք. քերբեալ գլուխք ձեր և հատեալ ի տէր յօղեցայք, ձեր պսակողին երգեմք ընդ ձեզ զփառս ի բարձունս:

ՄԱՆԿՈՒՆՔ ԴՁ.

Տենչալի տօնիւ սրբոցն զուարճանան այսօր եկեղեցւոյ մանկունք, տօնելով զյիշատակ Տարագոսի քաջ և արի յաղթօղ վկային, որ է պըսակեալ արեանն իւր հեղմամբ:

Պայծառանայ Սիոն մայր եկեղեցի, յիշատակաւ սրբոյն Պրովբոսի, որ ի մարտի անօրինացն արիաբար յաղթեաց ամբարիշտ արանցըն, և է առ Քրիստոս փառօք պսակեալ:

Անարատ զաւինն Հօր՝ բարձողին մեղաց, անուշահոտ զանձն ողջակիզեալ երանելին Անդրոնիկոս, որ զերկնայինսն խորհելով չարչարեցաւ վասն Քրիստոսի, թագաւորելով ընդ նմա յերկինս:

Մաղթանօք սոցա տէր մեզ ողորմեա, սպասաւորաց սոցա ոսկերաց, որք պարակից երկնաւորաց, տօնախըմբեմք զյիշատակ սոցա, ցընծութեամբ ընկալ զմեզ յերկնային խորանսն:

digitised by A.R.A.R.@